

# ՀՐԱՋԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻԾ

## ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻՆ

Հասարակո՞ղ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

8. Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻՆ

25.

[26 նոյ. 1930, Երևան]

Գերազատիւ Հա՛յր,

Ստացայ Ձեր նամակը 14 հոկտ. և Եղիա Բահանայի փորձը: — Շատ լաւ է ապւստ. ութը թերթի մէջ ընդամէնը միմիայն 57 սխալ կայ. շատ ոչինչ բան է. մանաւանդ որ միմիայն մէկ տող է փոխցրած. ի՞նչ պիտի ընէինք, հթէ ամբողջը փոխցնէր և ըսեր թէ ապեցի:

Վերջին երեսին վրայ որ դեռ փորձ է, կայ երկու սխալ. տակէն հաշված առաջին տողը աւրհնուրիւնն՝ պիտի ըլլայ աւրհնուրիւն. տակէն 7րդ տող Յովնանէս — ուղղել ըստ ձեռագրին՝ Յովնանէս:

70. — էջ 237. — Եւ քանի անթիւ բիւրուց կախարդաց — անթիւ բիւրեք բիւրուց կախարդաց:

71. — էջ 246. — զկէսն յիւր յինքեան ունիցի — զկէսն իւր:

72. — էջ նոյն. — որ անբաժին և անքանակ — անքակ. — Հմմտ. էջ 255:

73. — էջ 251. — որք յանդիմանէին — որ յանդիմանէին:

74. — էջ 260. — Այլ մի սք — Արդ մի սք:

75. — էջ նոյն. — Ձայնպիտիս — զայսպիտիս:

76. — Դիտ. — էջ 262 կան հետեւեալ տողերը. «Եւ մանաւանդ որ քան զամենեսին իմաստնագոյն համարին զՊրոտոն . . . Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւք . . . Ձի յորժամ ըզնորա մեծարոյ կարծիսն գծակցուք, և հանցուք զնս յաշաց իւրոցն խարսցելոց, ապա ցուցուք թէ ս՛վ Աստուած է, և զինչ նորա արարածք»:

Պրոտոնի մեծարոյ կարծիքները գրծածելու այս յայտարարութեան համապատասխան սպասելի էր. ընդարձակ բաժին մը, որ չի տեսնուիր Եղնիկի մեզի հասած այս երկին մէջ:

Եղնիկ նման յայտարարութիւն մը կատարած էր նախապէս և գրած էր. «Եւ ընդ Պարսից քէչին գտողս, ապախնեալ ի շնորհան Աստուծոյ, մատիցուք ի պայքար» (էջ 123): Այս յայտարարութեան անմիջապէս կը հետեւի Պարսից քէչին եղծումը:

Հետեւարար բնական է խորհիլ թէ ան Պրոտոնի սխալ կարծիքներուն եղծումն ալ գրի առած էր, որ դժբախտարար կերպացած է ամենակուլ ժամանակին:

77. — էջ 267. — ապա թէ ունիցիս զոք այլ աստուածս — առ աստուածս:

78. — էջ նոյն. — այլ խորհեալ ի բաց մերժէր — խորչեալ:

79. — էջ 273. — Պատասխանի. արդարեւ որպէս — Արդարեւ որպէս:

80. — էջ 286. — և յայլոց ընկերացն — և այլոց:

81. — էջ 288. — Եւ եթէ բժիշկ . . . մատուցանել, զի որ սկզբան — Եւ եթէ բժիշկ . . . մատուցանեն, որ սկզբան:

82. — էջ 303. — այլ եղիցի ձեր այոն այո, և ոչն ոչ. և թէ որ ինչ աւելի է — այլ եղիցի ձեր այոն այո, և ոչն ոչ. և որ ինչ աւելի է:

Ն. ԱՐԲ. ԾՈՂԱԿԱՆ

Ներփակեալ կուղարկեմ զրիպակներու ցանկը, տար բաւերը, յատուկ անունները, ծանօթութիւն մը (դնել տմեկնութիւնը): Կերևայ թէ ստոնց փորձերն ալ կը ստանամ. բայց կխնդրեմ որ գոնէ քիչ մը ուշադրութիւն րնէք. վիեննայի Մխիթարեանց ազգարանին համար շատ ստորացուցիչ է այսքան սխալաշատ ազգաբնութիւններ լոյս ընծայելը:

Արմատա ակի՝ Բ հատորին 1-1000 էջերը ձեռք բերելու համար հետեւեալ ձեւերը կան.

1) Պեակրատի կազմաւան մէջ Բ հատորի ամբողջական օրինակ մը կայ (միայն Բ հատոր), շքեղ կազմած, կաշեկազմ, որ արժէ 25 ա. . կուզէք, առնեմ զրկեմ Ձեզ՝ Ձեր հաշուին:

2) Մարքվարթի Բ հատորը եթէ ձեռք բերէք, պակեցէք Ձեր քով, նոյնպէս Ձեր հաշուին:

3) Ես այստեղ իմ աւելորդ օրինակներս պրպտելով գրաս 1-1000 էջերը, մի-միայն կպակտի 16 էջ. եթէ գտնեմ մեր արխիվին՝ մէջ նստե այս 16 էջը, կուզէք զրկեմ (ներողութիւն՝ խաւրիմ) Ձեզ, բայց տար համար քիչ մը ժամանակ սպասել պէտք է:

4) Եթէ կուզէք, դիմում ընենք փոստի վարչութեան. ես Ձեզ զրկած էի քոնի մը կապոց. եթէ պահած էք ստոնց երեսները, նոյնցէք և գրեցէք ինձ փոստային համարները, գրուած կըլլայ կարմրասառ Յ՛, քոնի ալ թուանշան մը: Ձեր համարները բոլորը գրեցէք զրկեցէք (խաւրեցէք), ես ստացականներուս նետ կհամեմտեմ, որը պակաս է, կպահանջեմ. կամ կգտնեն կվերադարձնեն կամ 25 ա. կուտան, որով Պեակրատի օրինակը կգնենք:

Դ հատորի պակասները կզրկեմ ի ձեռայ: Հատորներուն ճակատ գնել աւելորդ կը համարեմ. բոլորին ալ առաջին հատորի ճակատը բուռական է. կուզէք. քանի մը օրինակ խաւրեմ:

Բուռագրքիս վրայ Ձեր քննակալուն՝ չեմ կարդացած. չեմ ստացած որ կարդամ. ինչքան ալ գէշ գրուած ըլլայ, չպիտի նեղանամ. երբ Meillet մը գրած է գրուատիք մը, որ ոչ մի գրքի համար արուած է, ալ ինչո՞ւ պիտի նեղանամ ո՛չ ժառանգէտի մը խճրանքէն:

Մարքվարտի պատասխանին կպատենք: Ստացայ շնորհակալութեամբ Սերադր<sup>10</sup>. կարդացի, կարեարն առի և յետոյ առի գրադարան (համալսարանի), Ձեր կողմէն նուէք անունով:

Karstի Եօր աշխատութիւնն ալ ստացայ (բանասիրութեան պատմութիւնը)<sup>11</sup>. շատ անպիտան գործ. կարդացի և նուիրեցի մեր գրադարանին. նման գործեր եթէ հրատարակուին, կխնդրեմ որ ուղարկէք: Կինը միշտ վրաս հաշուելով:

Հանդեսէն ստացայ 1928-9, իսկ 1930 թուէն միայն յնվ.-փետրվ.: Գրապատասխանի խօսեցայ, ըսին որ մ՛շ միայն իմ անունով օրեէ րան ստացած չեն, այլ առհասարակ օրեէ Հանդես ստացած չեն և Ձեզի նամակ են գրել, առոր ալ պատասխանեցի որ օրեէ Հանդեսի յաջորդ թիւերը կխնդրէի որ առաջվան<sup>12</sup> պէս ի մի խանը ստացած չեն: Հանդեսի յաջորդ թիւերը կխնդրէի որ առաջվան<sup>12</sup> պէս ի մի հաւաքելով, ուղարկէիք Հաւածողուս<sup>13</sup> Արտո Եղիազարեանին<sup>14</sup>. անիկա կյաննէն ուր որ հարկ է:

Կպատեմ փորձերուն և պատասխանի: Ձերդ Հ. ԱՅԱՌԵԱՆ

26 նոյ. [ՀՍՍՀ Լուստոյկումասի<sup>15</sup> կլոր կնիք հայերէն եւ ռուսերէն]

[Յ. Գ.] Քոնի մը անգամ պատասխանայ Աղբալեանի<sup>16</sup> լեզուաբանական յօդուածներուն Հանդեսի մէջ. ստեղծ աւելի ապուշ րան կարելի՞ է գրել. ամօթ է Ձեզի ալ, Ձեր Հանդեսին ալ, որ այդքան ագիտական րաներ գրուին գիտութեան անունով գիտական Հանդէսի մը մէջ. — Մասնադիւանը<sup>17</sup> շատ կարեւոր Ձեզ և կխնդրէ որ իրեն ուղարկէք մէկ օրինակ Մարքվարթի Südarmanien und Tigrisquellen գիրքը<sup>18</sup>: Փոխադրեմ կուղարկէ իր նորատիպ ճեփակագրուայ չափ և կշեռք վերնագրով սուսուսասիրութեանէն քանի մը օրինակ որ համարժէք կըլլայ կամ քիչ մը աւելի:

- 1 Տե՛ս նամ. 24, ծան. 4:
- 2 Ի՞նչ պարուճակ աշուղտ. գուցէ աւել ցօրիւն էր:
- 3 յի է՛նչ արժանիքն արժատական բառարանի:
- 4 Պետական կրատարահնութիւնը նշանակող յաղաւաճ:
- 5 Ե. Մարգարէս (J. Marquart, 1864-1930), գերմանացի արեւելագէտ և կայացէտ, բանասէր, լեզուաբան, աշխարհագէտ: Մարքգվարթի Բ. հատորը, այսինքն՝ «էլայ. արմ. քառ. յի Բ. հատորը, որ նրան էր վերապահուած»:
- 6 Արիւն (առւս.), հայ. պիւնական:
- 7 Այդ առւս. գլխագիրը, որ նման է կայ. Յին, առւս. զանգոյն տղատաւիրութեան, յանն. արտերան բառի 1ին գիրն է, որին յաջորդում է պատասխանում նամակի փոստային թիւը:
- 8 Լ. Ն. Ակիւնեան, գրախոս.՝ «Է. Անուան, Հայերէն արժատական բառարան», ՀԱ, 1930, էջ 482 և յաջ.՝ Գրախոսութիւնը ամբողջ բառարանի մասին չէ, քանի որ այն ժամանակ գեւ լրիւ չէր չէր տեսնուի:
- 9 Անուան Մեյլէ (Antoine Meillet)ի չորս գրախոսութիւնները կայ. Թարգմանութեամբ տե՛ս նրա մեր կազմած և Թարգմանած «Հայագիտական ստուգանքային քերականութիւնները հատորում (Երևան, 1978), էջ 690-694: Անն այստեղ նկատի ունի յատկապէս հետազոտող ասպետը. «Ոչ մի լեզուի համար չկայ այսքան հոխ, այսքան կատարելալ ստուգանական բառարան: Նպատակն է, որ ունեցել եմ պր. Անուանին երկար տարիներ իմ աշակերտների թուում. նա մէկն է նրանցից, որոնք պատիւ են բերում այն գոյրոցին, որից ունեցել են» (Ե. Կ., էջ 183):
- 10 Լ. Ա. Վարդանեան, Մասնագրութիւնք Երևանի: Քննութիւն և քննարկ, Վիեննա, 1930:
- 11 J. Karst, *Geschichte der armenischen Philologie*, Heidelberg.
- 12 Ինքնագրում՝ այսպէս, այն ժամանակ գործող սուղագրութեան արդիւնքներով:
- 13 «Ստուգանքային քերականութեան կոմիտէ», կրթութեան նախարարութեան, այժմ «Ստուգանքային քերականութեան կոմիտէ»:
- 14 Արաւազը եղիպարեան (1899-1974), լուսաւորութեան ժողովրդական կոմիտէ է եղել 1929-1931 և 1934-1936 թթ.:
- 15 Տե՛ս ծան. 13:
- 16 Նիկոլ Աղբալեանի մասին տե՛ս նամ. 8, ծան. 37:
- 17 Յակոբ Մանանդեան (1873-1952), սովորել է Վիեննայում, Երևանի համալսարանի 1ին սեկտորը, քերականութեան և պատմագէտ:
- 18 J. Marquart, *Südarmenien und Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen* Վիեննա, 1930, 648 էջ:

26.

[Երևան, 9 մայիս 1931, ըստ ՀԱ 1953, էջ 454]

Միւրիի բարեկամ,  
Լ. Ն. Ակիւնեան,

Ձեր նամակը (14 մորտի) ստացայ, Հետամուտ էի նախ ձեռք բերելու Ձեր մատենախօսականը<sup>1</sup>. վերջապէս այսօր կտրուցի և նամակս նոյն թարմ ապաւորութեան տակ է որ կգրեմ: — Գրած էիք թէ ցաւած եմ արդեօք Ձեր նկատողութեանց համար. ի՛նչպէս կարելի էր այդ տեսակ հարց տալ. այնպէս արտագին և հոգեբուլի տարտալստութեանց համար ի՛նչպէս կրնայի ցաւիլ: Ո՛չ թէ ցաւի, այլ ամօթի զգացմունքով համակուեցայ և աչքերս լեցուեցան, երբ կտրուցի Ձեր սովորականէն շատ աւելի բարձր զովասանքները, որոնց մէկ մասը կվերաբերի Ձեր անձնական ծանօթութեան, որովհետեւ ուրի՛շ է անձնապէս ծանօթանալ մէկուեւ աշխատանքին, ուրի՛շ է հեռուից հեռու: Դուք կրկուքն ալ հղաք և տեսաք: Գալով այն խումբ մը գիտազութեանց, որ ըրած էք, փոխանակ ինձի ցաւեցնելու, առիթ պիտի տան ինձի աւելի խորամուխ ըլլալու քննութեանց մէջ և հասնելու աւելի կատարելուն: Ձկայ գործ մը որ ինք իր մէջ կատարելալ ըլլայ: Եւ ես ամէնքէն աւելի լաւ գիտեմ իմ աշխատութեանս պահանջները: Բայց կատարելագոյնին հասնելու համար միայն մի միջոց կար. ըլլալ Վիեննայի Միթիթորեանց Մատենադարանին առընթեր: Եւ այն էր իմ ծրագիրս ու նպատակս 1900 թուէն ի վեր: Միայն կողգէի ինչքան հայկական կարեւոր կեդրոն կայ, պտտիլ, տեսնել, հաւաքել և յետոյ անցնիլ Վիեննա, հոն



որովհետև անոնք գիտեն բնիկի և փոխառուի մասին արուած օրէնքները: Ազգայ. եանը չգիտէ և այս չգիտանալով հանդերձ գրելն է դատապարտելի: Աւելի դատա. պարտելի էք Դուք, որ այդ կարգի բաներուն լայն տեղ կուտայ Հանդէսի սուղ է. շիրուս մէջ:

Esqu'sseի նոր հրատարակութեան մասին Meilletն ինձ գրած էր<sup>10</sup>: Ամէն կերպ յորդորեցէք որ ընէ այդ բանը, Վիեննայի Միխիթարեանց մեծագոյն արժանիքներէն մէկը պիտի ըլլայ հայերէնի միակ համեմատական քերականութիւնը հրատարակած ըլլալը:

Karstի Originesը ստացայ (10 տուար). գրոշմանիչ փակցուած էր 2.68, ասիկա ալ տուարի վերածեցէք և ինծի ըսէք, որպէսզի Գիտական ինստիտուտէն պահանջեմ: Գիրքը անոնց ծախեցի:

Հիմայ ունիմ երկու խնդիր Ձեզի: —

1) Կիսնգրիմ որ մէկ օրինակ գնէք և ուղարկէք ինձ ապահովեալ ծրարով՝ La Revue de stomatologie, 1931 թիւ, յնվ. — մայ. (յաջորդներն ալ ապագային կստանանք). — հասցէն՝ Editeurs: Masson et Cie, Bould. St. Germain, 120, Paris VI.

2) Աւելի կարեւոր և մարդասիրական մի խնդիր: Հոս կայ հին ուսուցիչ մը՝ Լեոն Խոսնանման, պետական թշնակի արժանացած. երկու չափահաս արդիները տիֆէն մեռան. աղջիկ մը ունի, որ նոր աւարտեց համալսարանը. ամուսնական դժբախտութեամբ մը քանի մը շարքով առաջ մտաւ որ խնդրուած ունեցու. հայրը յուսահատ գրութեան մէջ է. բժիշկը ըսած է թէ կարելի է բժշկել, եթէ սրկուելի այս ինչ դեղը, որ միայն Գերմանիա կայ: Դիմեց ինձ և խնդրեց որ բերել տամ: Ես նախ դիմեցի Ձեզայի բժշկին և խորհուրդ հարցուցի: Բժիշկը բացաւ կանոնագիրքը և կարդաց հետեւեալը. — «Որեւէ Ֆիրմա կամ գործարան իրաւունք չունի օրեւէ դեղ ստանալու արտասահմանէն՝ վտանակուելու կամ այլ նպատակով: Բայց հիւանդ մը կամ հիւանդի աէրը կարող է արտասահման բնակող օրեւէ ակնհայտ ստանալ օրեւէ դեղ. դեղը կուզայ մաքսատու, հիւանդը իր գեղատեսնով կիւրկայանայ մաքսատուն և ազատօրէն կստանայ սեղարկուած դեղը»: — Այս օրէնքի հիման վրայ, ես հիմայ Ձեզմէ թախանազին կխնդրեմ, որ հոգ Վիեննա գնելով և կամ Գերմանիայէն Ձե՛զ սեղարկել տալով ստանաք հետեւեալ դեղը. — Freiburg (Breisgau) Physiologisch-chemisches Laborat. Hugo Rosenberg. Pyri'er stärke I, II, III, IV (ամէն մէկէն երկու տուփ) և V, VI, VII (ամէն մէկէն մէկ մէկ տուփ):

Այս դեղերը Դուք սնձամբ հոգ ստանալէն յետոյ, խնդրեմ ապահովեալ ձեռով սեղարկեցէք հետեւալ հասցէով՝ Erivan, Rue Amirian 23, Lévon Khasaniamian. Առաքուած և գինը (տուարով) ինծի ծանուցէք: Շատ կխնդրեմ որքան կարելի է օտայ խաւրել որ հիւանդութիւնը չստատկանայ:

Սրտագին և անձկալի բարեկներով իմ սիրելի եղբոր [...]<sup>10</sup>:

[Հ. ԱՅԱՌԵԱՆԸ]

<sup>1</sup> Տե՛ս նամ. 25, ծան. 8:

<sup>2</sup> Երևանի պետ. համալսարանի հրատարակչութիւնը 1971-1979 թթ. ապագիր վերահրատարակեց Աճի շէյա. արմ. բառ.ըը, ապակետիպ վեց և այլ. 7րդ հատորը վերածելով չորս ապագիր հատորի, ըստ որում յաւելուածը տեղագրելով իր տեղում: — ՀԱ, 1983, էջ 454-55ում Աճի մասին խօսելիս Հ. Ն. Ակիբեանը մէջըբերել է այս նամակի սկզբից մինչև այս ընծայէ բառը:

<sup>3</sup> Բառարանի յաւելուածը այլ. 7րդ հատորում էր. բովանդակում էր նաև առաջարանն ու վերջարանը. պատասխանել է Ն. Ակիբեանի դիտողութիւններէրց մի քանիսին:

<sup>4</sup> Տե՛մպ (ուս.), հայ. «թափ»:

<sup>5</sup> Բառարանի ապակետիպը Աճի ձեռագրով էր:

<sup>6</sup> Չէտք է քննադատաբար օգտագործել Հ. Ն. Ակիբեանի պատմագիտական աշխատութիւնները, որովհետև նա թայլ է տուել պատմագրական անշտութիւններ, արել է անապացուցելի ենթադրութիւններ: Ըստ նրա՝ ճրգ դարի պատմագիր Եղիշէի «կանս վարդանայ և Հայոց պատերազմին» գործը պատկերում է 572-590ի կարմիր վարդանի գլխաւորած ազըստմորթեան պատմութիւնը (Եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւն Հայոց պատերազմին, հատ. Ա, 1932, հատ. Բ, 1936):

<sup>7</sup> «Պատմութիւն Եղիա Բանանայի», տե՛ս նամ. 24, ժամ. 4:

<sup>8</sup> Իսաքը «Հայ. արմ. բառ. օր. Բ հատորի 1-1(10 էջերի վերաբերեալ է, որ Աճը պէտք է ուղարկէր Վրե՛ննա»:

<sup>9</sup> Տե՛ս նամ. 25, սկիզբը:

<sup>10</sup> Տե՛ս նամ. 25:

<sup>11</sup> Տե՛ս նամ. 28, ժամ. 7:

<sup>12</sup> Տե՛ս նամ. 25ի Թ. Գ.:

<sup>13</sup> Տե՛ս նամ. 10, ժամ. 16: Ռիւր (ՀԱ, 1928, էջ 70-72):

<sup>14</sup> Երևանում. Ն. Ն. Աղինեանը գրել է. «Ուռալին տեսութիւնս իրեն հետ տեղի ունեցաւ 1924 հեղտեմբերին Երևան: Այնուհետև յառաջ կը տեսնուէինք մինչև 1928 ապրիլ, այսինքն՝ Աղինեանի ձերբակալումը (ՀԱ, 1953, էջ 450):

<sup>15</sup> «Հայ. արմ. բառ. օրում» թիւրի ստուգաբանութիւնն է՝ պլշ. bevar, մանիք. պլշ. bivir, մա- նաւանդ պարս. bevar (bivār). չկայ նամակի ձևը. Ն. Աղբալեանի կարծիքը չի նշել ստուգա- բանութիւնների պատմութեան մէջ:

<sup>16</sup> Ն. Աղբալեան, Սպիտակ (ՀԱ, 1929, էջ 57):

<sup>17</sup> Այսպէս «Հայ. արմ. բառ. օր.» սպիտակ, պլշ. spektak (ըստ Հիւրմանի), ՎՍտ այսմ մեր բառի նախնին է՝ սպլտակ, ուր անշուշտ է յետոյ է դարձել ի: [...], Աղբալեան, ՀԱ, 1929, 552 համարում է բնիկ հայ. (տխալ է, որովհետև այս գէպքում պիտի ունենայինք ք հ. ոչ թ է օ, չհաշուելով գեւ-ակ վերջաւորութիւնը):

<sup>18</sup> Antoine Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique* (Ուրուալիմ դասական հայերէնի համեմատական ֆրականութիւն), Վրե՛ննա, 2րդ բարեփոխուած հրատ., 1936: Մեր հայե- րէն թարգմանութիւնը անտիպ է:

<sup>19</sup> Նամակի սեր լուսապատկէնի վրայ մի քանի բառ, ըստ որում ստորագրութիւնն ու թռեկանը չեն երևացել թղթի ոչ չիշտ կտրուելու պատճառով: Թարգմուէր՝ ըստ ՀԱ, 1953, էջ 454 է Աբբահայր Գր. Մանեանի ստուգման:

27.

[4 նոյ. 1936, Երևան]

Սիրելի բարեկամ,

Ստացայ 14 մարտի Ձեր գրութիւնը և պատասխանեցի 19 ապրիլին. մինչև այսօր պատասխան ստացած չըլլալով, ենթադրեցի որ կամ նամակս կորսուած է և կամ նորէն լեհաստան ճամբորդելու ելած էք: Պիտի կրկնեմ նամակիս բովանդա- կութիւնը:

1) Թեհրանի Ձեռագրաց ցուցակի փորձերը օրբադրած ուղարկեցի Ձեզ. միայն երկու էջ կար անսխալ. միւսները ամէնն ալ, նոյն իսկ գերմաներէնը սխալներ ու- նէին. եթէ ասոնք ուղղելու հնարք կայ, ուղղեցէք. իսկ եթէ կարելի չէ, կարևոր- ները վրիպակաց ցանկ մը կազմեցի, այդ ցանկը գրէք գրքին վերջը: Բայց գրքին երեսը խոշորատառ մեծ սխալ մը կայ, անիկա անհրաժեշտ է ուղղել: Անուաներու ցանկն ալ նորէն կազմեցի և խրկեցի. կիսգրէի խնամով ապել, որպէսզի անոր հա- մար ալ վրիպակաց ցանկ մը կողմէն հարկ չըլլայ:

2) Ձիւր ուղարկած գուճարը ստացայ՝ նոր կուրսով:

3) Ստացայ Ձաւրիստան քեր[ականութիւնը]՝. ի՞նչ պէտք է վճարել:

4) Meilletի Esquisseը՝ եթէ ապուհեցու, կիսնորբմ օրինակ մը հասցնէք ինձ. նոյնպէս Թեհրանի ցուցակէս մէկ օրինակ կազմելու. աւելի պէտք չէ:

5) Եթէ հարկ ըլլար Հայոց լեզուի պատմութիւնը՝ սպել Հանգէսի մէջ, արտա- տպելու պայմանով, քանի՞ օրինակ կարող էիք արամադրել հեղինակ, իբրև հօնօրոք:

6) Թեոկլի՞ լուսանկարչի մը հետ գացինք քննեցինք. լուսանկարին համար պահանջեց մէկ էջին՝ ապակին ալ միտասին տալով՝ 12 ուռքի: Աւրիմն verso և recto 24 ու. — եթէ երկու օրինակ ապուի, Վ. Բ. 28 ուռքի — Բայց՝

7) Տուր օր առաջ ժողովոյսրէի՞ նախագահ ընկ. Գուրոյեանը՝ մեր դասախոս- ներէն ժողով մը գումարեց և պահանջեց որ ամէնքս ալ մէյմէկ գիտական աշխա- տանքի լծուինք, ուսումնասիրելով էլջմիածնի և Երևանի 9000 ձեռագրերնրը, խոս- տանալով կառավարութեան կողմէ ամէն աջակցութիւն: Քանի մը գիրք որոշուեցաւ

հրատարակել այս տարի որոնցմէ են Սերէնսը պիտի պատրաստէ Մալխասեանը) և Քէնընը (պիտի պատրաստէ Մանանդեանը), Վերջինս յանձն առնելով գործը իր վրայ, խոստացու համեմատել ամբողջը յունարէնի հետ, սխալները ուղղի և ն. և ըստ ամենայնի գիտական հրատարակութիւն մը պատրաստելու Այս պատրագային Ձեր մտադրութիւնը ընդունայն կըլլայ, որովհետեւ ինչպէս իմացայ, Ձեռագրին լուսանկարը հանել և երկրէն դուրս ուղարկելն ալ առանձին արտածութեան կարօտ է, որ այս պատրագային կրնայ չթոյլատրուիլ:

8) Ընկեր Զօրեանը կուզէ ձեռնարկել խոշոր գործի մը՝ կազմել Հին հայ մասեցալուրերան համարագրութիւնը. ըսի իրեն թէ Վիեննացիք արդէն կազմած են Ոսկեդարի համարագրութիւնը. միտք ծագեցաւ երկուստեք փոխանակութեան. աւստրիացիները լուծել խնդիրը հետեւեալ ձևով. առաջին հերթին Զօրեան (և ընկերները) կկատարեն Ոտրենացու համարագրութիւնը, մէկ օրինակ (ձեռագիր), կխաւրեն Ձեզ, պայմանով որ Դուք ալ խաւրէք Փառաստը: Այնուհետեւ կուզան ուրիշ գործեր, և այսպէս մինչև վերջ<sup>10</sup>: Համաձայն էք: Եւ կամ եթէ չէք, ի՞նչ ձե կառավարիչէք մեզի:

9) Զօրեանը կկնդրէ Ձեզմէ որ առ այժմ զգուստակերտ, ձեռակերտ և արարակց բառերու բոլոր սակեղարեան օրինակները առյիժք իրեն, եթէ կարելի է. պէտք չկայ անշուշտ վկայութիւնները մէկ մէկ գրելու, այլ միայն գրքերու էջերը: Եթէ կուզէք այս նիւթը Հանկուի մէջ տպեցէք, իբր առանձին յօդուած<sup>11</sup>:

10) Հանկուէն օտարած եմ 1935 թ. 10-12 և 1936 թ. 1-3. տարին վերջանալու վրայ է և Դուք դեռ հո՞ս էք: Հիմայ արդէն արտածութիւն կայ Հանդէս օտանալու. և գրագրարանի մէջ ալ ազատ կարելի է կարդալ, ևս կըլլայ, եթէ Դուք ալ հրատարակութիւնը կանոնաւորէք և մանաւանդ ունենալով գանազան աշխատակիցներ և ոչ թէ միայն Հ. Ակինեանը<sup>12</sup>:

Չունենալով այլ ինչ ի գրել, մնամ սպասող Ձեր պատասխանին՝

Յարգանաց բարևներով՝  
Հ. ԱՃԱՌԵԱՆ

1936 նոյ. 4, Երևան

<sup>1</sup> Կուր (ուսու.), հայ. զընթացիկ սակարանային արժէք, սակագրինս:

<sup>2</sup> Վ. Զալիսեան, Փետրականութիւն հայկազնեան եզուի, աշխատատիրեալ ի Հ. Արսէնէ Այալուեան, Վիեննա, 1885:

<sup>3</sup> ՏԵՄ ՆԱՄ. 26, ծան. 19:

<sup>4</sup> Հր. Անուան, Հայոց լեզուի պատմութիւն, Ա մաս, Երևան, 1940, Բ մաս, 1951:

<sup>5</sup> Հայ. Վեդիկական տրուսոյ գրամական վարձատրութիւնս:

<sup>6</sup> Հ. Ն. Ակինեան, Քեռնայ Յաղագս հարստացական կրթութեանց (կամ Թէնի Նախակրթութիւնը), ԱՄ, 1934, էջ 197-212, Նորագիտ հայերէն թարգմանութեան առթիւ. Երևանի Մատենադարանի (1925 թ.) թ. 870 Ձեռ.ի մասին է. ուսումնասիրութիւնը հիմնել է տեղում այն ժամանակ կատարած քաղաքացիներ զրայ: Յօդուածի վերջում՝ Վեր փափաքն և հայերէն թնայիրը ամբողջութեամբ հրատարակուած տեսնել: Բնագրին պատրաստութիւնը սիրով պիտի ուղղի՜ք առնել յանձն, եթէ իտր՛. Հայաստանի Լուստողկոմը հանէր արամագրել մեզի օրինակութիւնը:

<sup>7</sup> Ժողովուրդի Նշ. Եթովպոսական կամուսարներ խորհուրդս:

<sup>8</sup> Արամա՛մ Փալպեան (1893-1938), Խորհ. Հայաստանի պետական աշխատող, 1935 ին ժողովուրդի նախագահ:

<sup>9</sup> Ստ. Մալխասեան(ց), Սերէս եպիսկոպոսի պատմութիւն, քննական հրատարակութիւն, Եր., 1939:

<sup>10</sup> Մի 12 տարուց ի վեր Երևանում մեքիտագրուած լոյս են տեսնում հայ հին գրականութեան երկերի շատ արժէքաւոր Համարագրութիւն. չենք կարծուք, որ գրանցից առաջ եղել են այդպիսիք:

<sup>11</sup> ՀԱՆՈՒՄ այդպիսի բան լոյս չի տեսել:

<sup>12</sup> Արգարե՛կ՝ Երեսունական և քառասական թթ. Հ. Ն. Ակինեանն էր լցնում ՀԱՆ: